

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԵՎ
ԴԵՐԻ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՓԱՐԻԶԻ «ԱՊԱԳԱՅ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹՈՒՄ
(1921-1925 թթ.)
(ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

Բանալի բառեր – Հովհաննես Թումանյան, Արշակ Չոպանյան, Զապել Եսայան, «Ապագա» շաբաթաթերթ, ազգային-հասարակական գործունեություն, մշակույթ, բանախոսություն, ժողովրդականություն, վկայություն, բնութագիր, առաքելություն

Ռամկավար ազատական կուսակցության (ՌԱԿ)¹ օրգան, Փարիզում լույս տեսնող «Ապագայ» քաղաքական և հասարակական շաբաթաթերթը իր գործունեության առաջին հնգամյա շրջանում՝ 1921-1925 թթ., ինչպես վկայված է թերթի հրատարակության 6-րդ տարվա սկիզբը ազդարարող խմբագրականում, շարունակաբար ծառայել է հայ ժողովրդի շահերին, ուշադիր հետևել նրան վերաբերող ամենատարբեր իրադարձությունների ընթացքին և առանց կուսակցական նախապաշարումների վերլուծել ու անաչառորեն գնահատել դրանք, պաշտպանել ամեն լավն ու օգտակարը, ինչպես նաև խարազանելով ու քննադատելով սխալը և վնասակարը՝ իր էջերում կարևոր տեղ է հատկացրել հայ մշակույթին ու նրա գործիչներին²: Շաբաթաթերթում հաճախ կարելի է հանդիպել որևէ գրողի, բանաստեղծի, մշակութային գործչի գործունեության կապակցությամբ կազմակերպված տարբեր միջոցառումների ընթացքում հնչեցրած բանախոսությունների վերաբերյալ անդրադարձումների (ինչպես, օրինակ, Շիրվանզադեի³, Լևոն Շանթի⁴, Կոմիտասի⁵, Արշակ Չոպանյանի⁶ մասին), ավելի հաճախ՝ հայ մշակութային կյանքի

¹ Ռամկավար ազատական կուսակցությունը նոր ձևավորվող հայկական սփյուռքի ծնունդ էր, որ կյանքի կոչվեց Հայ ռամկավար և Ազատական կուսակցությունների միության շնորհիվ: Այդ մասին տե՛ս **Դավլաթյան Կ.**, Ռամկավար ազատական կուսակցության պատմությունից (1921-1940), գիրք առաջին, Երևան, 1999, էջ 12-13:

² Տե՛ս «Ապագայ»-ի 5^{րդ} տարեկիցը // «Ապագայ», 1925, թիւ 1, էջ 1:

³ Տե՛ս **Տեր-Մարտիրոսեան Մ.**, Շիրվանզադեի եւ հայությանը // «Ապագայ», 1921, թիւ 21, էջ 3, «Ի պատիւ վարպետին «Պատիւ համար»-ի ներկայացումը» // «Ապագայ», 1921, թիւ 23, էջ 3:

⁴ Տե՛ս «Հին աստուածներու ներկայացումը» // «Ապագայ», 1924, թիւ 22, էջ 3-4:

⁵ Տե՛ս «Բանախոսութիւն մը հայ երաժշտութեան մասին» // «Ապագայ», 1923, թիւ 17, էջ 3:

⁶ Տե՛ս «Ա. Չօպանեանի յոբելեանի հանդէսը» // «Ապագայ», 1925, թիւ 9, էջ 2, «Ա. Չօպանեանի յոբելեանը Աթէնքի մէջ» // «Ապագայ», 1925, թիւ 11, էջ 2, «Ֆրանսիացիները եւ Չօպանեան» // «Ապագայ», 1925, թիւ 52, էջ 3:

նորությունների առնչությամբ սուկ տեղեկատվական հաղորդումների կամ քրոնիկոնների: Սակայն գրական-մշակութային լրատուներին զուգահեռ քիչ չեն նաև այս կամ այն գրողին, արվեստագետին նվիրված լրագրական այնպիսի հոդվածներ, որոնցում տրվում է ստեղծագործողի որևէ գործի կամ ժառանգության բնութագրական գնահատականը, ինչպես, օրինակ, Պետրոս Դուրյանի¹, Մատթեոս Զարիֆյանի², Մայքլ Առլենի³ և ուրիշների: Այս առումով հիշարժան է հատկապես Արշակ Չոպանյանի՝ վաղուց արդեն հայտնի հոդվածը Եղիշե Չարենցի մասին⁴, որը, չնայած իր «լրագրական» լինելուն, առ այսօր բանաստեղծի ստեղծագործության լավագույն գնահատումներից է, եթե չասենք նրա բանաստեղծական ժառանգության մի կարևոր հատվածի մեկնության ու գնահատման ելակետը⁵:

«Ապագան» գրել է նաև Հովհաննես Թումանյանի մասին: Ուշագրավ է, որ իր գործունեության առաջին շրջանում՝ 1921-1925 թթ., շաբաթաթերթը նրան անդրադարձել է ավելի հաճախ, քան որևէ մեկ այլ գրողի: Այս հանգամանքը թերևս կարելի է բացատրել Թումանյանի անձի, ստեղծագործության և ազգային-հասարակական գործունեության նկատմամբ շաբաթաթերթի հետաքրքրությամբ ու համակրանքով:

«Ապագայի» էջերում առաջին անգամ Հ. Թումանյանի անունը հիշատակվում է 1921 թ. հունվարի 19-ին Ծննդյան տոների առիթով Փարիզի Հայ ռավակավար ակումբի կազմակերպած հավաքույթի գեղարվեստական բաժնում նրա «Հին օրհնություն» (թերթի շարադրանքում՝ «Հայրենի օրհնություն» – Վ. Ա.) քերթվածի արտասանության կապակցությամբ⁶: Ի դեպ, այդ միջոցառմանը շատ հայ երիտասարդ արվեստագետների հետ ներկա է եղել նաև նկարիչ Փանոս Թերլեմեզյանը: Հաջորդ անգամ «Ապագայի» էջերում Հ. Թումանյանի անունը հանդիպում է մի քանի ամիս անց՝ ապրիլին: Շաբաթաթերթը ներկայացնում է Փարիզում լույս տեսնող «Օշական» գրական-գեղարվեստական կիսամյա հանդեսի 5-6-րդ միացյալ համարի բովանդակությունը, որտեղ «Գիրքեր եւ դէմքեր» խորագրի ներքո կարդում ենք. «Յովհ. Թումանյան Անտոն Կազեյ»: Կողմնակիորեն նշենք, որ վերջինս մեզ մնաց անձանոթ, նա հիշյալ «Օշական» հանդեսում երկու էջանոց մի հոդված ունի՝ նվիրված Թու-

¹ Տե՛ս «Պետրոս Դուրեանի մահուան յիսնամեակի հանդէսը» // «Ապագայ», 1922, թիւ 15, էջ 3, **Բաշալեան Լ.**, Պետրոս Դուրեան // «Ապագայ», 1922, թիւ 16, էջ 3:

² Տե՛ս **Չօպանեան Ա.**, Մատթեոս Զարիֆեան // «Ապագայ», 1924, թիւ 30, էջ 1:

³ Տե՛ս «Մայքըլ Արլէն.- անգլիահայ նշանաւոր գրող մը» // «Ապագայ», 1924, թիւ 38, էջ 1:

⁴ Տե՛ս **Չօպանեան Ա.**, Եղիշե Չարենց // «Ապագայ», 1924, թիւ 16, էջ 1, թիւ 17, էջ 1:

⁵ Տե՛ս **Զրբաշյան Էդ.**, Արշակ Չոպանյանի հոդվածը Եղիշե Չարենցի մասին // «Բանբեր Երևանի համալսարանի», 1977, թիվ 3, էջ 135, **Գաբրիելյան Վ.**, Արշակ Չոպանյանը սովետահայ գրականության մասին // «Բանբեր Երևանի համալսարանի», 1989, թիվ 1, էջ 36:

⁶ Տե՛ս «Փարիզի Հ. Ռամկ. Ակումբին Ծնունդի երեկոյթը» // «Ապագայ», 1921, թիւ 6, էջ 3:

մանյանի «Հայրենիքիս հետ» խորագրով բանաստեղծությունների գրքույկին¹:

Ինչպես հայտնի է, 1921 թ. սեպտեմբերին Երևանում կազմակերպվում է ՀՕԿ-ը Հայաստանի օգնության կոմիտեն: Թումանյանը Ալ. Մյասնիկյանի հրավերով բազմաթիվ այլ գործիչների հետ գալիս է մայրաքաղաք: Կազմվում է վարչություն, խմբագրվում է կոմիտեի կանոնադրությունը, որոշվում են անելիքները²: Հիմնադիր ժողովը վճռում է նախագահ ընտրել Թումանյանին, որից բանաստեղծը, ինչպես հետագայում մտաբերում է Լևոն, «հրաժարվում էր երկար ու երկար, խնդրում, աղաչում էր իրեն ազատ թողնել, որպեսզի գրականությամբ զբաղվի»³: Այնուամենայնիվ նա դառնում է ՀՕԿ-ի նախագահ՝ համոզված, որ քանի դեռ «մի ժողովուրդ սովամահ է լինում փողոցներում, պետք է թողնել ամեն ինչ, մոռանալ ամեն բան եւ գնալ նրան փրկելու»⁴: Թումանյանը գրում է նաև կոմիտեի կոչը⁵, «որ,– ինչպես նշում է Լևոն Հախվերդյանը,– կարծես նրա կտակն էր իր ժողովրդին», որ «այսօր էլ հնչում է իբրև նվիրական պատգամ»⁶:

«Ապագան» 1921 թ. 46-րդ համարում նույնությամբ տպագրել է Հ. Թումանյանի կոչը, սակայն առանց հեղինակի անունը արձանագրելու: Կոչի վերջում միայն այն ստորագրող անդամների ցանկում հիշատակվում է նաև նրա անունը: Թերթի նույն համարում՝ կոչի տեքստի շարադրանքից հետո, նշվում է, թե ինչպես է կազմավորվել ՀՕԿ-ը, և ինչպես է Թումանյանը դարձել նախագահ. «Իր բողոքներուն հակառակ, ընդհանուր ժողովը Կոմիտեի նախագահ ընտրեց Պ. Յովի. Թումանեանը, որուն անկուսակցականութիւնը և գրական անունը՝ կարող էին նպաստել ընդհանուր համերաշխութիւն յառաջ բերելու»⁷: Այստեղ, ինչպես նկատում ենք, առավելապես շեշտադրվում է բանաստեղծի հասարակական հեղինակությունը, որը կարող էր երաշխիք դառնալ ազգային համախմբման:

«Ապագան» «Վերջին լուրեր Հայաստանէն» խորագրի ներքո պարբերաբար տեղեկություններ է հաղորդել նորաստեղծ Խորհրդային Հայաստանի քաղաքական, տնտեսական, մշակութային կյանքի մասին: Շաբաթաթերթի 1921 թ. հերթական համարներից մեկում տպագրված, այդ ժամանակ

¹ Տե՛ս **Անտոն-Կազել**, Յովիաննէս Թումանեան. «Հայրենիքիս հետ», Թիֆլիս 1916 // «Օշական», Բարիզ, 1921, թիւ 5-6, էջ 141-142:

² Տե՛ս **Թումանյան Ն.**, Հուշեր և գրույցներ, Երևան, 1969, էջ 253, **Հախվերդյան Լ.**, Թումանյանը և իր ժամանակը, Երևան, 1995, էջ 92:

³ **Հախվերդյան Լ.**, նշվ. աշխ., էջ 92:

⁴ Նույն տեղում, էջ 93:

⁵ Տե՛ս **Թումանյան Ն.**, նշվ. աշխ., էջ 253:

⁶ **Հախվերդյան Լ.**, նշվ. աշխ., էջ 93, 94:

⁷ «Ինչպէ՛ս կազմուեցաւ Հ. Օ. կոմիտէն» // «Ապագայ», 1921, թիւ 46, էջ 3: ՀՕԿ-ի կազմավորման գործում Հ. Թումանյանի ունեցած դերի և գործունեության մասին շատ հակիրճ հիշատակություն կա նաև «Ապագայի» 1925 թ. 5-րդ համարում. տե՛ս «Հօկի եւ Կարմիր Խաչի պատուիրակներուն զեկուցումը», էջ 2:

Խորհրդային Հայաստանի կոմիսար Արտաշես Կարինյանի՝ երկրում տիրող վիճակի և պահանջների մասին հայտարարությունից միջնորդաբար տեղեկանում ենք, որ շուտով Կ. Պոլիս պիտի գան «ծանօթ բանաստեղծ Յովհ. Թումանյան եւ քանի մը ուրիշ մտաւորականներ, որպէս ներկայացուցիչներ Հայաստանի Օգնութեան Կօմիտէի, որ կազմուած է հայ ժողովուրդի բոլոր հոսանքներէն»¹: Նույն համարում հաղորդվում է նաև, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը հատուկ հրամանագրով ութ հայտնի գրողների համար ցմահ սահմանել է կենսաթոշակ՝ ապահովելու նրանց «ամէն կարգի բարոյական եւ նիւթական պէտքերը»²: Ցանկում է նաև Հ. Թումանյանի անունը Լեոյի, Լ. Շանթի, Ավ. Բսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Հ. Հակոբյանի, Դավիթ Անանունի, Հովհ. Հովհաննիսյանի հետ մեկտեղ:

1921 թ. հոկտեմբերին Հ. Թումանյանը ժամանում է Կ. Պոլիս³, հանդիպում Պատրիարքին, տեղեկություններ հաղորդում Հայաստանում տիրող իրավիճակի, ժողովրդի կենցաղի վերաբերյալ, իսկ նրանից իմանում Կ. Պոլսում ձեռնարկված նպաստահավաքության մասին⁴: Ըստ շաբաթաթերթի հաղորդումների՝ Հ. Թումանյանը Կ. Պոլիս գործուղված իր գործընկերների հետ հանդիպել է նաև Համագային ժողովի անդամներին, սերտ համագործակցության նախադրյալներ ստեղծել այնտեղ կազմակերպված Սովյալների կենտրոնական հանձնախմբի և ՀՕԿ-ի միջև⁵: Ինչպես գրում է «Ապագան», Ռամկավար ազատական կուսակցությունը, որը, ի դեպ, մեծ աջակցություն է ցուցաբերել ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի ստեղծմանը⁶, ի պատիվ Թումանյանի Կ. Պոլսում կազմակերպում է հանդիպում և թեյասեղան, որը նախագահում է Վահան Թեքեյանը: Բազմաթիվ մտավորականների, նշանավոր գործիչների և մամուլի ներկայացուցիչների մասնակցությամբ Վ. Թեքեյանը, կուսակցության անունից բարի գալուստ մաղթելով օրվա հյուրին, բացատրում է, թե ինչի շնորհիվ է Թումանյանը ամենաժողովրդականը հայ բանաստեղծների մեջ: Զեկուցողները կարևորում են այն փաստը, որ Թումանյանը Հայաստանում ստեղծված իրավիճակի պատճառով «պահ մը իր քնարը հայրենիքի ուռիներէն կախած՝ իր բովանդակ կարողութիւնները ի

¹ «Վերջին լուրեր Հայաստանէն. Պ. Կարինեանի յատարարութիւնները» // «Ապագայ», 1921, թիւ 47, էջ 3: Հ. Թումանյանի՝ Կ. Պոլսում ծավալած գործունեության, օրերի և տպավորությունների մասին տե՛ս **Թումանյան Ն.**, նշվ. աշխ., էջ 258-262, **Հախվերդյան Լ.**, նշվ. աշխ., էջ 95-97:

² Այդ մասին տեղեկություն կա նաև Հովհ. Թումանյանի՝ Արշակ Չոպանյանին ուղղած մի նամակում. տե՛ս **Դալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան. կյանքը և գործը, Երևան, 1987, էջ 365:

³ Տե՛ս **Հախվերդյան Լ.**, նշվ. աշխ., էջ 95:

⁴ Տե՛ս «Վերջին լուրեր Հայաստանէն. ՊՊ. Յովհ. Թումանյան եւ Թաղիանոսեան Կ. Պոլսոյ մէջ» // «Ապագայ», 1921, թիւ 50, էջ 3:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս **Շոխազարյան Ա.**, Ռամկավար ազատական կուսակցության գործունեության հիմնական ուղղությունները 1920-ական թթ. // «ՀԱ», 2018, թիվ 3, էջ 83:

սպաս դրած է իր հայրենակիցներուն գոյութեան պահպանման գործին»¹: Դարձյալ ընդգծվում է Թումանյանի հասարակական գործունեության դերը:

Երգ ու արտասանություններից, բանախոսություններից հետո, ինչպես նշվում է, խոսք է առնում Հ. Թումանյանը, որին ողջունում են ծափահարություններով: Ծնորհակալություն հայտնելով Ռամկավար ազատական կուսակցությանը և ներկաներին՝ հայրենիքի վերաշինության գործին աջակցելու համար՝ նա ներկայացնում է հայ ժողովրդի ծանր վիճակը, «որ հակառակ իր ժայերն անգամ մշակելու ջանադրութեան, ընտանիքին հացը հայթայթելու անկարող կ'ըլլայ»²: Համոզված, որ պոլսահայությունը համախմբվել է մայր հայրենիքի շուրջ, Թումանյանը խոստանում է այդ ջերմ զգացումները վերադարձին փոխանցել հայրենակիցներին՝ նրանց էլ ավելի սրտապնդելու և տոկալու նոր ուժ հաղորդելու համար:

Թումանյանի մեկնումը Կ. Պոլիս նրա համար ուներ ևս մեկ շատ կարևոր առաքելություն. խոսքը վերաբերում է Կ. Պոլսի Հայ արվեստի տան հիմնադրմանը, որը նա դարձյալ հաջողությամբ իրականացնում է: «Ապագան» նախ փաստում է այդ իրողությունը, ապա ներկայացնում Արվեստի տան նպատակները և արդեն կատարված գործերը³:

Թումանյանի՝ Հայ արվեստի տան գործունեության շրջանակում ծավալած գործունեության գնահատանքի ակնառու մի արտահայտություն է այն փաստը, թե ինչպես է 1922 թ. Պ. Դուրյանի մահվան 50-ամյա տարելիցի կապակցությամբ Փարիզում կազմակերպված գրական-գեղարվեստական հավաքույթի ժամանակ վաղամեռիկ բանաստեղծի մասին իր բանախոսությունը Արշակ Չոպանյանը սկսել նրա՝ Կ. Պոլիս կատարած առաքելության և այնտեղ ծավալած գրական-հասարակական աշխատանքների ու շահագրգռվածությունների մեծարմամբ. «Պ. Թումանեան, ըսաւ բանախօսը, չբաւականացաւ միայն հաց ուզելով, որովհետեւ մարդ միայն հացով չապրիր, այլ արուեստով և հոգիին սնունդով ալ, և կազմուեցաւ Հայ Արուեստին Տունը, որուն շուրջ բոլորուած են Կ. Պոլսոյ գրական և գեղարուեստական բոլոր դէմքերը: Հակառակ մեր բոլոր դժբախտութեանց պէտք չէ մոռնալ որ ազգային արուեստը ամենէն էական ուժն է, որ ազգ մը ունի: Թումանեան հիմնելով Ազգային Արուեստի Տունը, ուզեց վառ պահել հայ արուեստի ջահը և ցոյց տալ, թէ հայ մտաւորականութիւնը դեռ կ'ապրի»⁴:

Դարձյալ «Ապագայից» ենք տեղեկանում, որ նրա վախճանից օրեր առաջ՝ մարտի 19-ին, Փարիզում տեղի Հայ համալսարանական միությունը, ի պատիվ «մեծ բանաստեղծ և ազգային գործիչ» Թումանյանի, մայրաքաղա-

¹ Տե՛ս «Վերջին լուրեր Հայաստանէն. ՊՊ. Յովհ. Թումանեան եւ Թաղիանոսեան Կ. Պոլսոյ մէջ» // «Ապագայ», 1921, թիւ 50, էջ 3:

² Նույն տեղում:

³ «Հայ արուեստի տունը Պոլսոյ մէջ» // «Ապագայ», 1922, թիւ 11, էջ 4:

⁴ «Պետրոս Դուրեանի մահուան յիսնամեակի հանդէսը» // «Ապագայ», 1922, թիւ 13, էջ 3:

քի սրահներից մեկում կազմակերպում է գրական-գեղարվեստական երեկույթ, որին իր մասնակցությունն է բերում նաև Ա. Չոպանյանը՝ կարդալով բանախոսություն բանաստեղծի կյանքի և գրական գործի վերաբերյալ: «Վեր հանելով անոր արժեքը իբրև ժողովրդական բանաստեղծ»՝ Չոպանյանը խոսքը հաճախ համեմտում է գրողի տարբեր գործերի ընթերցումներով: Թումանյանին ներկայացնելով նաև իբրև հասարակական գործիչ, որ «մեծ յարգ ու պատիւ կը վայելէր Ազգային բոլոր շրջանակներուն մէջ», Չոպանյանը զեկուցման վերջում հաղորդում է, որ նա այժմ ծանր հիվանդ է և տեղափոխվել է Մոսկվա՝ բուժվելու¹: Ընդամենը օրեր անց՝ մարտի 25-ին, Չոպանյանին է հասնում բանաստեղծի որդու՝ Համլիկի չարագույժ հեռագիրը. «Քսաներեքի երեկոյեան հայրիկս վախճանեց Մոսկուայում»²: Այդ առիթով ահա Չոպանյանը, որ կանոնավոր աշխատակցում էր «Ապագային»³, որոշում է լրագրական մի փոքրածավալ հոդվածով անդրադառնալ մեծ բանաստեղծին: Մենք չգիտենք, թե Հ. Թումանյանի մասին Չոպանյանի հիշյալ բանախոսությունը իր բովանդակությամբ, վերլուծման տրամաբանությամբ որքանով է առնչվում «Ապագայում» տպագրված այս հոդվածին, սակայն, դատելով բանախոսության վերաբերյալ նույն պարբերականի նախընթաց համարում արտահայտված մտքերից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանախոսությունն ու հոդվածը միմյանց սահմանակցում են խիստ մոտ ժամանակով, կարելի է ենթադրել, որ այդ բանախոսությունը այս հոդվածին նախորդող զուգակը կարող էր լինել: Ինչևէ...

Հոդվածի առաջին տողերում Ա. Չոպանյանը, սրտահույզ խոսքերով սգալով անդառնալի կորուստը, իր «անմխիթարելի կսկիծն» է հայտնում «մեր ամենասիրելի» բանաստեղծի վաղաժամ մահվան առիթով՝ համոզված, որ նա «դեռ այնքան բան ուներ ընելիք՝ իր քերթողական գործը ընդլայելու և լրացնելու, մեր գրականութիւնը նոր նոր հրաշակերտներով ճոխացնելու համար»⁴: Իր հարգանքի և երախտագիտության բոլորանվեր խոր զգացումները արտահայտելուց հետո նա անհրաժեշտ է գտնում շատ հակիրճ մատնանշել Թումանյանի ստեղծագործության էական գծերը, այն արժեքները, որոնցով բանաստեղծը հարստացրել է հայ քնարերգությունը:

Առաջին հերթին Չոպանյանը շեշտում է Թումանյանի ստեղծագործության ժողովրդական արմատները, ընդգծում այն իրողությունը, որ գրողի քնարերգությունը գլխավորապես բարձրացել է ժողովրդական նյութի վրա՝ ներառելով մեր ժողովրդի հինավուրց մտածողությունը, մեր ազգային խառնվածքի կարևոր երանգները: Այս իմաստով գրականագետը Թուման-

¹ Տե՛ս «Յ. Թումանեանի ի պատիւ գրական-ազգային երեկույթը» // Նույն տեղում, 1923, թիւ 17, էջ 3:

² «Մահ Յովհաննէս Թումանեանի» // Նույն տեղում, թիւ 18, էջ 1:

³ Տե՛ս **Դալլաքյան Կ.**, Արշակ Չոպանյան, էջ 414:

⁴ **Չոպանեան Ա.**, Յովհաննէս Թումանեան // «Ապագայ», 1923, թիւ 19, էջ 1:

յանին համարում է Խաչատուր Աբովյանի լավագույն հաջորդն ու նրա գրական ավանդների շարունակողը: Նշենք, որ մեկ տարի անց՝ 1924 թ. «Ապագայում», Ե. Չարենցին նվիրված իր վերոհիշյալ հոդվածում Չոպանյանը, իհարկե, այլ դիտանկյունից, հաստատում է նույն համոզումը: Անդրադառնալով Չարենցի՝ հայոց բանաստեղծության հետ ունեցած ամուր կապին, միաժամանակ ստեղծագործական ինքնատիպությանը՝ նա հավելում է. «Չարենց աւելի խնամութիւն ունի Աբովեանին եւ Թումանեանին հետ, որ դիւցազներգական և երգիծական կրկնակ լարերը կը միացնեն իրենց կենսախայտ փանդիռին վրայ, այն տարբերութեամբ սակայն որ այդ երկուքը շատ աւելի մօտիկ են ժողովրդական արուեստին, իրենց գործը մեծ մասամբ անոր գերագոյն զարգացումն ու ծաղկափթթումն է...»¹:

Հ. Թումանյանի գրական նորարարությունը, ինչպես ճշմարտացիորեն գտնում է Չոպանյանը, ավելի որոշ է հատկապես մեր բանաստեղծության մեջ լիրո-էպիկական ժանրի հաստատումով. «Մեր հին ու նոր հմուտ բանաստեղծութեան մէջ քնարական տարրը չափազանց տիրապետող է. սակաւաթիւ են հոն էջեր, ուր գործողութիւն գոյութիւն ունենա... Թումանեան մտցուց գործողութիւնը մեր բանաստեղծութեան մէջ, զարգացուց վիպերգին կարևոր կեանքոտ ճիւղը, և անոր մէջ տուաւ գլուխգործոցներ...»²: Այս նույն միտքն է հավաստում նաև ակադեմիկոս Էդ. Ջրբաշյանը. «Բայց կա մի բնագավառ, ուր Թումանյանի դերը հատկապես մեծ է, բացարձակ իմաստով առաջնակարգ և անփոխարինելի: Դա էպիկական պոեզիայի, պատմողական բանաստեղծական ժանրերի (պոեմի, բալլադի) բնագավառն է: Թումանյանի անունը մեր գիտակցության մեջ ամենից առաջ կապվում է էպիկական լայն ու հզոր պոեզիայի հասկացողության հետ: Այստեղ ոչ մի ուրիշ բանաստեղծ չի կարող մրցել Թումանյանի հետ»³:

Չոպանյանը շատ բարձր է գնահատում նաև Թումանյանի լավատեսական ոգին՝ գտնելով, որ ժամանակակից մելամաղձոտ բանաստեղծության մեջ նա բերել է «հոգեկան լուսաւոր ու արու առողջութեան» տրամադրություն: «Անոր (Թումանյանի – Վ. Ա.) երգը ուժի, զուարթութեան, հաւատքի, լուստեսութեան պոռթկում մըն է, պայծառ ու խրոխտ՝ նոյնիսկ ցաւի արտայայտութեան մէջ»⁴, – եզրակացնում է գրականագետը՝ բանաստեղծի քնարերգության մեջ հայտնաբերելով մեր ժողովրդի հոգևոր խառնվածքի համար այնքան խորհրդանշական դարձած կենսասիրության ցուցումը, որը բոլոր ժամանակներում իր դրսևորումն է ստացել մեր բանաստեղծության մեծերի ներշնչանքի մեջ: Այսպես, առանց հատուկ զուգահեռներ անցկացնելու, Չոպանյանը հայտնաբերում է Թումանյանին Նարեկացու, Քուչա-

¹ **Չոպանեան Ա.**, Եղիշէ Չարենց // «Ապագայ», 1924, թիւ 16, էջ 1, թիւ 17, էջ 1:

² Նույն տեղում:

³ **Ջրբաշյան Էդ.**, Թումանյանի պոեմները, Երևան, 1964, էջ 5-6:

⁴ **Չոպանեան Ա.**, Յովհաննէս Թումանեան, էջ 1:

կի, Աբովյանի ստեղծագործության հետ կապող ընդհանուր հատկանիշը, որը հետագայում ուրիշների կողմից պետք է ստանար կոնկրետ բովանդակություն և ընդգրկվեր բանաստեղծի գեղարվեստական և ազգային նշանակության ընդհանուր բնութագրի մեջ՝ դառնալով թումանյանագիտության զինանոցի կարևոր բաղադրիչներից մեկը:

Հոդվածում թեև ակնհայտ է զգացական տարրը, և հաճախ Չոպանյանի խոսքը Թումանյանի նկատմամբ ստանում է քնարական երանգներ, սակայն քննադատը իրեն հատուկ խորաթափանցությամբ բանաստեղծի ստեղծագործության վերաբերյալ անում է կարևոր և արժեքավոր ընդհանրացումներ, տալիս սեղմ ու դիպուկ գնահատականներ, որոնք, ճիշտ է, այսօր կարող են թվալ ինքնին հասկանալի մի բան՝ բոլորի կողմից ընդունված, համընդհանուր ճանաչում առած, սակայն չմոռանանք, որ նա այդ ամենը ասել է շուրջ հարյուր տարի առաջ: «Այդ անգուգական վիպերգուն, – գրում է Չոպանյանը, – հայ մանուկներուն հրճուանքը կազմող այդ համեղ առակախօսն ու զրուցագիրը, այդ կորովի դիցազներգակը զմայլելի քնարերգակ մըն էր նաև. ան երգած է՝ հակիրճ, ազնիւ ու նուրբ շեշտերով՝ սիրոյ հեշտանքն ու տանջանքը, մահուան խորհուրդը, կեանքի գեղեցկութիւնն ու ցաւերը, բնութեան (մասնաւորապէս հայրենի բնութեան) թովչութիւնները, ու երգած է մանաւանդ Հայ ազգի դարաւոր եղերական ու հերոսական ճակատագիրը, ժամանակակից հայ պայքարն ու ողբերգութիւնը՝ շարք մը սքանչելի էջերու մէջ, որոնք հզօր խտացումներ, համադրութիւններ են...»¹:

Եվ վերջապէս Չոպանյանը Թումանյանին ներկայացնում է որպէս մարդ ու ազգային-հասարակական գործիչ՝ առանձնակի ուժով շեշտելով թե՛ առաջինը և թե՛ երկրորդը նրա մէջ. «Մարդը Թումանեանի մէջ այնքան հրապուրիչ ու սիրելի էր, որքան գործը: Անիկա մեծ սիրտ մըն էր՝ իր ազգին բանաստեղծութեան եւ իր բարեկամներուն սիրով ամէն բոպէ հզօրապէս բարախող»²:

Հոդվածն ավարտվում է այն անմնացորդ հավատով, որ Թումանյանի գործը հավերժորեն պիտի ուղեկցի սերունդներին՝ մշտապէս վարակելով լավատեսությամբ, իսկ նրա շիրիմը պետք է ուխտատեղի դառնա՝ հոգեկան առողջություն ու գեղեցիկի ներշնչում պարգևելով այցելողներին³:

«Ապագայի» նույն համարը, որտեղ տպագրվել է Ա. Չոպանյանի հիշյալ հոդվածը, տեղեկացնում է, որ առաջիկայում Փարիզում անց են կացվելու հոգեհանգստի արարողություններ՝ նվիրված Թումանյանի հիշատակին, իսկ մարտի 29-ին Բեռլինում կազմակերպվել է սգահանդես, որին ներկա են գտնվել Ռուսաստանի, Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի, ինչպէս նաև Բեռլինի հայ գաղութի և մամուլի ներկայացուցիչներ: Բանախոսություն

¹ **Չոպանեան Ա.**, Յովհաննէս Թումանեան, էջ 1:

² Նույն տեղում:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 2:

է կարդացվել Թումանյանի կյանքի և գործի վերաբերյալ, որ թարգմանվել է ռուսերեն: Առանձին պարբերությամբ հաղորդվում է, որ Փարիզում գտնվող մի խումբ հայ գրողներ ու բանաստեղծին բարեկամ անձնավորություններ, նրանց մեջ Ա. Չոպանյանը, Շիրվանզադեն, Շանթը, Լ. Բաշայանը, Տ. Կամսարականը, Ալեքսանդր Խատիսյանը և ուրիշներ, ցավակցական հեռագրեր են ուղարկել. մեկը՝ հասցեագրված Թումանյանի ընտանիքին, մյուսը՝ Հայաստանի համալսարանին: Հեռագրերի կարճ շարադրանքում ընդգծվում են հատկապես սիրելի բանաստեղծի վաղահաս կորստի ցավը և անկոտրում հավատը՝ նրա գործի հավերժության¹:

Դարձյալ «Ապագայից» ենք տեղեկանում, որ Վիեննայում 1923 թ. ապրիլի 17-ին Մխիթարյան հայրերի մասնակցությամբ սգահանդես է կազմակերպվել՝ նվիրված Թումանյանի հիշատակին: Նկարագրելով միջոցառման մանրամասները՝ թերթը շատ հակիրճ ներկայացնում է նաև բանախոսներից յուրաքանչյուրի խոսքի բովանդակությունը, որոնց մեջ ուշագրավ է ունի Դ. Լուսինյանի այն միտքը, թե Թումանյանը առաջինն է, որ կարողացել է ամբողջ Կովկասի հոգին երգել՝ արտահայտելով նրա ցավն ու տառապանքները²:

Թերթի հաջորդող համարը, ըստ իր ստացած տեղեկությունների, հաղորդում է, որ Մոսկվայում Թումանյանի մարմինը հիվանդանոցից տեղափոխվել է Լազարյան ճեմարանի դահլիճ, որտեղ կատարվել է հոգեհանգիստ: Բժիշկները բանաստեղծի սիրտը հանձնել են նրա ընտանիքին, իսկ ուղեղը առել են հետազոտության՝ հետո Հայաստանի թանգարանին ուղարկելու: Հանգուցյալի մարմինը տեղափոխվել է Թիֆլիս: Ճանապարհին՝ հայաշատ քաղաքներում, ժողովուրդը իր խոնարհումն է բերել մեծ բանաստեղծին: Թիֆլիսում Թումանյանի մարմինը երկար ժամանակ դրվել է իր նախագահած Հայ արվեստի տան (Հայարտուն) դահլիճում, որտեղ օրեր շարունակ բազմաթիվ մարդիկ հոծ բազմությամբ եկել են հրաժեշտ տալու նրան: Ինչպես հաղորդում է շաբաթաթերթը, Երևանի և Թիֆլիսի միջև վեճ է ծավալվել բանաստեղծի հուղարկավորման տեղի հարցում: Հայաստանի կառավարությունը չի ցանկացել զիջել վրացական իշխանություններին, որոնք տեղի հայ, վրաց, թուրք և ռուս ազգաբնակչության անունից պահանջել են «իրենց սրտերը միացնող բանաստեղծի մարմինը իր ապրած Կովկասի կեդրոնին մեջ» թողնել³:

Հ. Թումանյանի վախճանից հետո ևս «Ապագան» պահպանեց իր հետաքրքրությունը նրա գործի և ստեղծագործության նկատմամբ, ամեն հնարավոր առիթով շտապեց արտահայտել իր ջերմ վերաբերմունքը բանաստեղծի հանդեպ:

1923 թ. հունիսին 9-ին, ի հարգանք Թումանյանի հիշատակի, Սորբոնում

¹ Տե՛ս «Յովհաննես Թումանեան» // «Ապագայ», 1923, թիւ 19, էջ 4:

² Տե՛ս «Սգահանդես Վիեննայի մեջ» // Նույն տեղում, թիւ 23, էջ 4:

³ «Յովհ. Թումանեանի մարմինը» // Նույն տեղում, թիւ 24, էջ 3:

տեղի է ունենում «գրական-գեղարուեստական մեծ երեկոյթ», որի նախաձեռնության մասին շաբաթաթերթը տեղեկություն էր տալով մայիսի 17-ի համարում՝ ներկայացնելով նաև միջոցառման ամբողջ ծրագիրը¹։ Երեկոյթը նախագահել է Ալ. Շիրվանզադեն, որը բացել է միջոցառումը՝ Թումանյանին ներկայացնելով որպես հայ ժողովրդի հոգին թափանցած, այն ուսումնասիրած և գեղարվեստորեն արտահայտած մեծ բանաստեղծ։ Նա պատմել է իր ու Թումանյանի մտերմական հարաբերությունների մասին, նրան ներկայացրել նաև իբրև ընկերական հաճելի բնավորության տեր մարդու²։

Վրացի բանախոսներից մեկը իր խոսքում ընդգծել է հատկապես Թումանյանի՝ հայ-վրաց ժողովուրդների մերձեցման գործում ունեցած առաքելության մեծ նշանակությունը։

Երեկոյթին, ինչպես տեղեկանում ենք, բանախոսել է նաև Ջապել Եսայանը, որի ճառը՝ իբրև «գրական գոհար մը», «Ապագան» խոստանում է ամբողջությամբ հրապարակել իր հաջորդ համարներում։ Շատ զուսպ է, սակայն, շաբաթաթերթի վերաբերմունքը Վազգեն Ահարոնյանի բանախոսության վերաբերյալ՝ նվիրված Թումանյանի գրական դիմանկարին։ «Ապագայի» որակմամբ՝ «երիտասարդ հրապարակագիրը բաւական ջանք թափած էր պատրաստելու իր ճառը, որ լի էր եռանդով և ջերմութեամբ, բայց անշուշտ թերի և տժգոյն»³։ Նման վերաբերմունքը պայմանավորվում է նրանով, որ բանախոսը չի ծանրացել՝ վերլուծելու բանաստեղծի ստեղծագործության գեղագիտական առանձնահատկությունները և դասակարգելու այն սեռերը, որ Թումանյանն է մշակել, և բավարարվել է սոսկ նրան իբրև ազգային բանաստեղծ ներկայացնելու բացատրությամբ⁴։

Հետաքրքիր է իմանալ, որ գրական հանդիսավոր այդ հավաքույթին ճանախոսել է նաև Ա. Չոպանյանը, որը, ինչպես նշված է հաղորդագրության մեջ, «իր սովորական պերճախօսութեամբ» հարգանքի ողջույն բերելով Թումանյանի հիշատակին, հատկապես ընդգծել է գրողի քնարերգության՝ մեր ժողովրդի հոգևոր ներքին խառնվածքի համար այնքան հարազատ կենսասեր ոգու արտահայտությունը, որով նա դարձավ «իր ցեղին ձայնը»։ Այս անգամ շեշտը դնելով հատկապես քառյակների վրա և նրանցից մի քանիսը արտասանելով՝ Չոպանյանը «մարդկային բարձրագոյն իմաստասիրական սքանչելի (այդ) էջերը» արժանի է համարում Օմար Խայամի քառյակներին։

Մինչև երեկոյթի գեղարվեստական մասին անցնելը հարգանքի խոսք է հնչեցրել և Ավետիս Ահարոնյանը՝ մանրամասներ պատմելով Թումանյանի հետ իր հանդիպումների մասին⁵։

¹ Տե՛ս «Յովհ. Թումանեանի յիշատակին» // Նույն տեղում, թիւ 27, էջ 4։

² Տե՛ս «Յովհ. Թումանեանի երեկոյթը» // Նույն տեղում, թիւ 29, էջ 4։

³ Նույն տեղում։

⁴ Տե՛ս նույն տեղում։

⁵ Տե՛ս նույն տեղում։

Ինչպես և խոստացվել էր, «Ապագան» հաջորդող երկու համարում տպագրում է Ջապել Եսայանի ճառը: Այստեղ գերիշխող է զգացականությունը. բանախոսի ինքնաբուխ, հուզաբորբոք խոսքը առավելապես հիացական զգացմունքների արտահայտություն է՝ հագեցած պատկերավոր բնութագրումներով. «Մարդիկ կան, – ասել է բանախոսը, – որոնց դեմքը կարծես թե շաղախուած է լոյսով, սուրբի դեմքեր կան, մաշած, գունատ, բայց լուսաւոր: Կարծես բոլոր տխրութիւնները և վիշտերը որ այցելած են իրենց, հետերնին տարած են աստիճանաբար ինչ որ կար մարդու մէջ մոայլ ու ստուեր եւ քանի յաճախ այցելած են, այնքան արագօրէն մարդը մաքրագործուած եւ իր աստուածային տիպը ստացած է: Այդպիսի դեմք մըն էր Յովհաննէս Թումանեանի ճերմակ եւ ալեհէր դեմքը և այդպիսի մաքուր ուրախութիւնով մը ողողուած էր անիկա»¹: Թումանյանի կերպարը բնութագրող այնքան տաք, քնարական, ջերմ խանդաղատանքով առլեցուն հուզիչ այս խոսքը, անշուշտ, հաճույքի հետ մեկտեղ պատկերացում է տալիս նաև հեղինակի գրչի թափի մասին:

Մեծ ցավով փաստելով բանաստեղծի անժամանակ վախճանը՝ Ջ. Եսայանը իր խոսքի սկզբում մի դիտարկում է արել, որը խորհրդածելու տեղիք է տալիս. «Թումանեան սեմի մը վրայ էր, նորօրինակ և կարմիր արշալոյսի մը առաջ, բայց կեանքի դուռը փակուեցավ իր դէմ, և այդ դուռը փակեց նաև շրջանի մը ընթացքը»: Անհասկանալի է մնում՝ ի՞նչ շրջանի մասին է խոսքը, որը Թումանյանի մահով ավարտ առավ: Ու թէն Ջ. Եսայանը չի ծավալում իր միտքը, սակայն ելնելով նրա զեկուցման ընդհանուր ոգուց՝ կարելի է թերևս ենթադրել, որ բանախոսը նկատի է ունեցել թումանյանական լեզվի անկրկնելի յուրահատկությամբ, գրողի ստեղծագործության թեմատիկայի անդառնալիությամբ և գեղարվեստական մտածողության համակարգով պայմանավորված այն բացառիկությունն ու անկրկնելիությունը, որը չունեցավ շարունակություն: Գրեթե նույն միտքը, իհարկե, այլ առիթով և այլ նշանակությամբ, ինչպես հիշում ենք, Թումանյանի կապակցությամբ արտահայտել էր Վ. Տերյանը իր հայտնի «Հայ գրականության գալիք օրը» զեկուցման մեջ²:

Ջ. Եսայանը ավելի շատ անդրադառնում է Թումանյանի անձին, կենցաղին՝ մասնավորապես շեշտելով նրա ներողամտությունը, բարեմտությունը, սիրո այն հզոր կարողությունը, որով նա սրտակից ընկեր էր դառնում եղբայրական ջերմության ու մխիթարության կարոտ ամեն մարդու՝ ամենաթշվառի մեջ անգամ արթնացնելով հպարտություն և արժանապատվություն. «Արդար ու բարի, իր սերը կճառագայթեր ամենուն վրայ և որքան առիթ ունենար զայն շոայլելու, այնքան եւ առաւելապէս հարստացած ու զեղուն կը զգար ինքզինքը սիրով»³:

¹ Եսայեան Ջ., Յովհ. Թումանեան // «Ապագայ», 1923, թիւ 31, էջ 3:

² Տերյան Վ., Երկերի ժողովածու, հ. 3, Երևան, 1975, էջ 72-73:

³ Եսայեան Ջ., Յովհ. Թումանեան // «Ապագայ», 1923, թիւ 30, էջ 2:

Մի առանձին հետաքրքրություն են ներկայացնում Եսայանի այն հիշողությունները, որոնք վերաբերում են Թումանյանի՝ մեր ազգային հոգեկերտվածքի վերաբերյալ մտորումներին ու գնահատականներին: Թումանյանը հավատացած էր, ինչպես պատմում է բանախոսը, որ մեր ժողովրդին ի սկզբանե հատուկ են եղել ուրախությունը, կենսունակությունը, մղումը դեպի լույսը, և ճակատագրի բերումով է, որ նա շեղվել է իր բնական վիճակից՝ վարակվելով տխրությամբ ու լալկանությամբ: Եվ Թումանյանը համոզված էր, որ մեր ժողովրդի հոգու անխաթար իսկությունը ճանաչելու համար պետք է դիմել նրա «ուրախութեան աղբիւրներին», ասել է թե՛ բանահյուսությանը, և այնտեղ գտնել մեր ժողովրդի անհաղթահարելի կենսունակության առեղծվածի լուծումը:

Չ. Եսայանը գտնում է, որ Թումանյանը իր ժամանակակիցներից միակն էր, որ բոլորից ավելի մոտեցավ ու հաղորդվեց ժողովրդական ակունքներին՝ շնորհիվ դրա ինքը ևս դառնալով «մեր հարազատ ժողովուրդի ամենէն ազնուական ուրախութեան աղբիւրներէն մէկը»: Փաստորեն, ինչպես Ա. Չոպանյանը, Չ. Եսայանը ևս Թումանյանի ապրումների նրբությունն ու հարստությունը, ստեղծագործությունների լավատեսական ու կենսասեր ոգին մեկնաբանում է հարազատ ժողովրդի հետ ունեցած հոգևոր անմիջական կապով: «Կարենալ ըմբռնելու համար Յովհ. Թումանեանի (բնագրում՝ Թումանի, որ վրիպակ է – Վ. Ա.) զուարթութեան յատկութիւնը, – ասում է նա, – պետք է թափանցել մինչև խորը այն ժողովուրդին որուն հարազատ զուակն էր: Իր մէջ համադրական արժէքով մը կ'արտացոլար մեր խաղաղ և ուրախ ժողովուրդին ամենաբարձր յատկութիւնները»¹: Սրանով է պայմանավորվում Թումանյանի անձի մեծ ժողովրդականությունը, նաև պատճառաբանվում նրա ժառանգության լայն ճանաչումն ու իմացությունը. «Իր հիացումները ունէին մանկական զարմացումներ և իմաստունի խոկումներ. իր միտքը անարգել կը թելածէր բոլոր տարիքներու, բոլոր ժամանակներու և բոլոր վիճակներու մէջ անկաշկանդ...»²:

Մտաբերելով իր առաջին հանդիպումները Թումանյանի հետ և ստացած տպավորությունները՝ Չ. Եսայանը հատկապես հիշում է Եղեռնին հաջորդող այն դաժան օրերը, երբ Թումանյանը Էջմիածնից նոր էր վերադարձել՝ իր հետ բերելով «արմատախիլ ու ոգևար ժողովուրդի մը հեծեծանքը»³: Եվ այն ժամանակ, երբ շատերը, ինչպես բանախոսն է վկայում, «իրենց անձնուիրութեան առաջին թափին մէջ» հոգնած, «յուսախար», անգամ «նախատական

¹ Եսայեան Չ., Յովհ. Թումանեան // «Ապագայ», 1923, թիւ 31, էջ 3:

² Նույն տեղում:

³ Պահպանվել է Հ. Թումանյանի նամակը՝ 1916 թ. Բորժումից գրված Չ. Եսայանին, որտեղ նա նկարագրում է իր ֆիզիկական ու մանավանդ հոգեկան ծանր վիճակը Էջմիածնից վերադառնալուց հետո. տե՛ս Թումանյան Հ., Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 11, Երևան, 1999, էջ 245:

դէպի պատերազմի գոհերը», ընկճվել էին, հիասթափվել ու նահանջել, Թումանյանը այն եզակիներից էր, որ չբեկվեց ու սպեղանի դարձավ իր վշտացած ժողովրդի համար: Այստեղ նա, ի դեմս Թումանյանի, ներքին մարդուց առավել շեշտում է հասարակական գործչին ու ժողովրդի անձնուրաց նվիրյալին:

Զ. Եսայանը պատմում է նաև Թումանյանի անհաշիվ, անսպառ, առասպելական (նրա բնութագրումներն են) հյուրասիրությունների մասին, հիշում մանրամասներ, որոնք դարձյալ բնորոշում են Թումանյանի սիրելի անձը, գծագրում նրա հմայող կերպարը՝ «անխարդախ, անկեղծ, հաղորդական և միշտ նման ինքզինքին»¹:

1924 թ. իր մայիս-հունիսյան համարներում «Ապագան» հայտարարություն է տպում Հ. Թումանյանի նոր լույս տեսած բանաստեղծությունների ժողովածուի վերաբերյալ՝ տեղեկություն տալով գրքի բովանդակության, տեսքի, գնի մասին²: Իսկ շուտով այդ գրքի վերաբերյալ հակիրճ գրախոսականով հանդես է գալիս Գեղամ Ֆեներճյանը³: Նա նախ ժողովածուի հրատարակումը որքան էլ թեև ուշացած, սակայն իր հապաղմամբ հատկապես գտնում է ճիշտ ժամանակին հրապարակ ելած ու անհրաժեշտ, քանի որ ազգային ճակատագրի համար բախտորոշ իրադարձություններից հետո՝ «ընկճումի և համակերպումի այս օրերուն», երբ իշխող էր դարձել կորուստներից թելադրվող հուսալքությունը, այն գալիս էր հաղթահարելու մշակութային ընդամացումը և ամեն կողմից մեզ պաշարած թերհավատությունը: Գիրքը, որ Ֆեներճյանի որակմամբ ամփոփում էր Թումանյանի ընդարձակ գործի ամենակարևոր մասը՝ չափածոն, պետք է դառնար մեր գրականության փառքը կազմող սեղմ հատորներից մեկը:

Ակնարկային այս գրախոսության մեջ շեշտվում է հատկապես Թումանյանի քնարերգության կենսախինդ, ապրեցնող ոգին, որ վշտի, թախծի, տրտմության միջոց դուրս է ժայթքել և լցվել ու լցրել հավատով: Թումանյանը գնահատվում է որպես այն եզակիներից մեկը, որ կարողացել է ճանաչել իր ժողովրդի խորքը, այն գեղեցիկը, որը ժամանակների ու փորձությունների հոլովություն աստիճանաբար ոչ թե ընկրկել, այլ բյուրեղացել է: Ու թեև բանաստեղծի որևէ ստեղծագործություն չի մատնանշվում, սակայն գրախոսի խոսքից պարզ է դառնում, որ նա առավել կարևորում է Թումանյանի հայրենասիրական քնարը, որ, բարձրանալով անցյալի հիշողությունների վրա և

¹ Եսայեան Զ., Յովհ. Թումանեան, թիւ 31, էջ 3:

² Տե՛ս «Լույս տեսան Յով. Թումանեանի բանաստեղծութիւնները» // «Ապագայ», 1924, թիւ 28, 29, 30, 32:

³ Տե՛ս Ֆեներճեան Գ., Յովհ. Թումանեանի բանաստեղծութիւնները // «Ապագայ», 1924, թիւ 43, էջ 2-3:

վերագտնելով «մեր արիւնին հին առաքինութիւնները»¹, «անոր հետ կը խայտայ ու կը թրթռա լիալար»: Եզրակացությունը դառնում է մեկը. «Գործ մը ուր ցեղի մը հազարամեայ ժառանգութիւնները կը բերուին վերջնական ձեւաւորումներու, կը մնայ խնկելի և սրտապնդիչ», քանի որ, ինչպէս Ֆեներճյանն է գրում, գրողը «կրցած է գտնել մէկ քանի երակները ցեղին հոգիին ու զանոնք սնեռել մնայուն ձևերու մէջ»²:

1924 թ. տարեվերջյան համարում՝ «Հայաստանի լուրեր» բաժնում, «Ապագան» ծանուցում է, որ Թումանյանի ամենարժեքավոր ստեղծագործությունները թարգմանվել են վրացերեն: Շաբաթաթերթի հավաստամամբ՝ նախադեպը չունեցող այս իրադարձությունը նպատակ ունէր Կովկասի ժողովուրդների միջև իրենց գրականությունների փոխադարձ ծանոթացմամբ սերտացման փորձ անելու, իսկ Թումանյանի ընտրությունը այս առումով գնահատվում է շատ ճիշտ ու տեղին, քանի որ «համամարդկային իտեալներու անմահ երգչի» բանաստեղծությունները «համակ սեր կը բուրեն և համերաշխութիւն»³: Փոքրիկ այս հաղորդման մէջ, ինչպէս տեսնում ենք, շաբաթաթերթը չի բավարարվում սոսկ տեղեկատվությամբ, այլ շտապում է դարձյալ իր համակրական վերաբերմունքը արտահայտել Թումանյանի նկատմամբ:

Այսպիսով, ինչպէս տեսանք, «Ապագայ» շաբաթաթերթը իր գործունեության առաջին հնգամյա շրջանում՝ 1921-1925 թթ., տարբեր առիթներով անդրադարձել է մեր մշակույթի մեծ երախտավորի կյանքի ու գործունեության զանազան դրվագներին, ստեղծագործության էջերին: Ու որքան էլ թէն այդ անդրադարձումների ծանրակշիռ մասը ավելի շատ ունի տեղատվական բնույթ, երբեմն հպանցիկ անդրադարձերից այն կողմ չի անցնում, սակայն հանդիպում են նաև Հ. Թումանյանի գործի բազմակողմանի հմուտ վերլուծության փայլուն օրինակեր: Որպէս օրինակաչափություն այդ հոդվածներում առավելապէս շեշտադրվում է բանաստեղծի հասարակական, ազգային ու մշակութային գործունեությունը, նրա մասին բազմաթիվ հուշերում գծագրվում է նրա կերպարը՝ իր նախասիրություններով, իդեալներով, դժվարություններով, երազներով, առավել ևս՝ իր ժողովրդին անձնուրաց նվիրումով: Դրանք ուշագրավ են նաև Թումանյանի ստեղծագործությունը մեկնաբանելու, վերլուծելու գրականագիտական արժեքավոր դիտարկումներով, որոնք գուցե այսօր ունեն առավելապէս գրապատմական նշանակություն, սակայն, միևնույնն է, չպետք է երբեք շրջանցվեն:

¹ Շաբաթաթերթում տպագրված է «մեր ատենին հին առաքինութիւնները», որ վրիպակ է: Այդ մասին տե՛ս «Ապագայ», 1924, թիւ 44, էջ 4:

² **Ֆեներճեան Գ.**, նշվ. աշխ., էջ 2-3:

³ «Հայաստանի լուրեր» // «Ապագայ», 1924, թիւ 7, էջ 4:

Вачаган Авагян – Оценка работы и роли Ованнеса Туманяна в парижском еженедельнике «Апага» (1921-1925)

Распространяя материалы об Ованнесе Туманяне, опубликованные на страницах еженедельника «Апага» в Париже (1921–1925), автор статьи показывает, что эти материалы, несмотря на свой журналистский характер и лаконичность, содержат многочисленные ценные свидетельства, мемуары о Туманяне, а также поучительные и полезные замечания о его работе. И хотя, по мнению автора, сегодня они имеют в основном литературное и историческое значение, тем не менее, они представляют интерес для исследований в области туманяноведения в целом.

Vachagan Avagyan – The Appreciation of Hovhannes Tumanyan’s Works and Role in “Abaka” Weekly of Paris (1921-1925)

By separating and circulating the materials on Hovhannes Tumanyan, published in “Abaka” weekly of Paris (1921-1925), the author of the article shows that in spite of their journalistic and concise nature, there are numerous valuable testimonies and memories, as well as evaluative, instructive, useful observations on his works. Today they may have mostly a literary and historical significance, but are interesting for Tumanyan studies in general.

Ներկայացվել է 21.08.2019

Գրախոսվել է 04.09.2019

Ընդունվել է սպագրություն 05.11.2019